

ծոյ, որ շնորհեացն զյաղթութիւնն եւ բարձրացոյց զպարծանս եկեղեցւոյ միոյ¹ սրբոյ, եւ ողջունեալ զնոսա ուրախանային ի Զրիստոս:

ՀԱ. Եւ անցուցեալ զաւուրս դառնաշունչ ձմերայնւոյ ցրտոյն՝ հասանէին գարնանային² ժամանակի աւոյն բարեխառնութեան. լսէին, թէ զաւր բազում խաղացեալ գայ ի Պարսից. եկեալ հասեալ են ի սահմանս Զերայ եւ Չարաւանդ գաւառի բազում զաւրագլուխք, որք էին այսոքիկ. Սուրեն պալհաւ, եւ Ատրներսեհ, փուշտիպանան³ սաղար, եւ Վինի-խոռեան, եւ Ատրվշնասպն-ի-Տապեան⁴, եւ Գդիհոն Սիւնեաց տէր. եւ ի սոսա թէպետ եւ ըստ գահոյ եր ոք ի վեր՝ այլ հրամանատու եւ աւագ զաւրուն՝ փուշտիպանան⁵ սաղար եր:

2 Փութացաւ եւ զաւրավարն Զայոց Վահան Մամիկոնեան, առեալ ընդ իւր եւ զսուրբ հայրապետն Զայոց զտէր Յոհան, յուսալով յաղաթս առնն, թէ ամենայն ինչ ըստ նորա կամելոյ կատարի յԱստուծոյ. եւ գումարեալ զզաւրսն Զայոց՝ ճեպէր հարկանել Նոցա⁶ 7ի դիմի անդէն գայն տեղեալք. «Թերեւս ոչ, ասէր, լիցի անցանել բազմութեանն Պարսից ի միջոց կողմն աշխարհիս Զայոց»: 3 Եւ առեալ ընդ իւր զնախարարսն եւ զազատս եւ զայլ ամենայն ռամիկն, որք կամաւոր խնդութեամբ երթային ի գործ պատերազմին, եւ չուեալք ի Դունայ⁸ զաւրքն Զայոց՝ ըստ աւուրս աւթեւանացն երթեալ հասանէին ի գաւառն յԱրտագ, եւ մաւտեալք ի գունդն Պարսից՝ բանակէին ի գիւղ⁹ մի, որում անունն էր Ներսէհապատ:

4 Եւ սուրբ կաթողիկոսն Յոհան հրաման տայր ամենայն գնդին Զայոց՝ ջերմեռանդն խնդրով պարապել¹⁰ աղաւթից զգիշերն ողջոյն եւ խնդրել ի մարդասէր Փրկչէն՝ բարձր առնել զանուն իւր մեծ ի մեջ բազմութեան ժողովելոցն հեթանոսաց, տալ բաժին պարծանաց ծառայից իւրոց, եւ զմասն ամաւթոյ՝ ուրացողացն դասու: 5 Եւ այնպէս զաւրավարին Զայոց Վահանայ Մամիկոնենի, սքանչելի ասպետուն Սահակաւ¹¹ մարգպանաւ եւ ամենայն զաւրաւքն Զայոց, յորդոր սրտիւ խնդրելով յԱստուծոյ աւգնութիւն՝ կատա-

1 ԲԳտ. միոյ-ի մասին ունին ծնթ. «Թերեւս՝ մերոյ կամ իւրոյ»:

2 Հ. ի գարնանային

3 ՏՏ. փուշտիպանացն. Հ. փուշտիպանան

4 ՏՏ. Վինի-խոռեան եւ Ատրվշնասպն-իտապեան. Հ. վինի խոռեան եւ ատրվշնասպն իտապեան

5 ՏՏ. փուշտիպան. Հ. այսպէս. վերջին ա-ն լուսանցքում ուղղած՝

6 ՏՏ. չիք Նոցա

7 ՀՏՏ. ի դիմի, եւ անդէն գայն տեղեօք թերեւս...

8 Հ. միշտ դըւին, դըւնայ

9 Հ. ի գետ

10 Հ. պարապել (պատուով)

11 Հ. սահակայ